

Խակ իւր արդինքը և խնայողաւթիւնքը հաշուելով զել և զմուտ ունի 100 կալ հողայ մը վրայ 7 ֆուանք չահ, զոր բաժնելով 100 ի վրայ, կունենանք գրեթէ 14 հարիւրեակ առ մէն մի կալ:

Բայց ի ձրից երազութեան և խնայութեան, ունին մերենապք ուրիշ առաւ, և լութեան մի ես, որ վերագասել կու տայ մեղ իւր գործածութիւնն քան զգերանդիս, և է այս ինչպէս նախնարար յիշատակիցինք իւր ամենամեծ ճշութիւնն և կանոնաւորութիւնն որով կը կտրէ զիտակիր, և որոյ օգուտը աւելի բացայաց կը տեսնափ երկրորդ և երրորդ հնձման ժամանակ, Խսկ իսոզանն որ կը գտնուի շատ անգամ աճած բու սոց մէջ և որոյ վրայէն կը սահի գերանդին տռանց կտրելու, ընոհակառակն նեցուկ և յենարան կը լինի մերենային սպոցին, որոյ վրայ յեցած կը կտրէ սպոցը այն բարակ և փափուկ խոռոչը որ կը բու սնին առատարար ուրիշ բարձրագոյն բուսոց արմատոց բոլորտիքը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐԱԼՈՒՐՔ



Մարդուս մարմնոյն տարրաբանական բաղադրութիւնը. — Անցաւանները անդղիական լրագրաց միջն մէջ հաստարակուած էր, թէ 70 հազարագրամ կշռող մարզու մը տարրաբանական բաղադրութիւնն, եղած զանազան հաջուց համեմատ՝ հետևեալն է.

Մարդուս մարմնոյն մէջ 13 տարերը կը գտնուին, յորոց հինգն իւղային են և ութ հաստատուն: Յառաջ քան զամենայն, մարդս կազմուած է թթուածնէ: որ յետին աստիճանի ճնշեալ վիճակ մ'ունի. վասնդի մեր մարմինը 44 հազարագրամ թթուածին կը բովանդակէ, որոյ քանակն ի սովորական բարեխսառնութեան՝ 30 մէդր խորանարդքառակուածին՝ անցնի: Ձրածինն, որ նուազէ խոռութեամբ, մարդուս մարմնոյն բաղադրութեան մէջ 7 հազարագրամ կը գտնուի. սակայն այս կշռոս յազատ վիճակի՝ 80 մէդր խորանարդքառակուածի կ'ըլլայ: Տասուերկու մարդկանց ջրածնաւ 1000 մէդր քառակուսի ընդունակութիւն ունեցող օդապարիկ մը կրնայ լցնուիլ որ երեք կամ չորս հոգի կրնայ բարձրացունել: Դարձեալ մարդուս մարմնոյն մէջ 1 հազարագրամ և 72 հազարագրամ բորակածին կը գտնուի, 800 գրամ ըլլր և 100 գրամ ծորին:

Մարդուս մարմնոյն մէջ հաստատուն մարմիններէն առաջին ածուխն է՝ որ 22 հազարագրամ կը գտնուի, 800 գրամ լուսածին, և 100 գրամ ծումբ:

Մարդուս մարմինն ամեննեին թանկագին մետաղ մի չբովանդակեր, այլ 1,750 գրամ կրածին, 80 գրամ կալիոն, 70 գրամ նատրուս, 50 գրամ մագնես, և 50 գրամ երկաթ:

Այս զանազան տարերքս անթիւ կերպով իրարու հետ միացած են, և այնշափ անհամար բաղադրութիւնք կը կազմեն, զոր թէ մէկն ուզէ

համրել, կարող է հատոր մի ձևացնել: Ասկայն երկայնամիտ և յօժա-
ռակամ՝ տարրաբան մը, կրնայ մի առ մի այն բաղադրութիւնքն տարրա-
լուծել, և հուսկ ուրեմն մարդուս մարմինը վերոյիշեալ 13 տարերց
վերածել:



Նոր մակարոյն ձձի մի ՚ի մարդու. — Երեք չորս տարիներէ ՚ի
վեր ձարոնի մէջ որդարանական ամենակարենոր գիւտ մ' եղաւ: Պա-
յէց քանի մի հնդիկներու լեարդից մէջ մակարոյդ ճճիներ գտաւ,
որք ըստ բաւականի ոչխարաց լեարդին մէջ գանուող թիրեղ կոչուած
ճճեաց կը նմանէին: Զասոնք ըստ տեսակաց երկուքի բաժնեց, զորյետոյ
Պլանշառ ՚ի մի դաս վերածեց՝ երկրերան ձարունեան (Distoma gapo-
picus) անուաննելով: Այս կենդանիքս ձուածեն, 12 հազարրորդամետր
երկայնութեամբ, 2-3 հազարրորդամետր լայնութեամբ, թափան-
ցիկ և երկու զօրաւոր ծըծափոլք ունին: Իրենց ձեւանալուն եղանակն
գեռ անծանօթ է: Նրբագոյն հաւկիթ մը, երկայնածեն և թրթռամա-
զով լի սազմի կը ծնանի, որ և ջրոյ երեսպ դիւրաւ կը լուզայ. Հաւան-
որէն թրթռութիւնը մը զանազան վիճակներն պիտի առնու, և փոփխակի
երբեմն ազատ և երբեմն մակարոյդ կեանք մը պիտի անցունէ. վասն
զի սովորաբար այս կերպով կ'ամին հայոսուկէն (Trématode) կո-
չուած ճճեաց հոյն, որոց կը վերաբերի նաև այս մեր վերոյիշեալ
երկրերան ձարունեան:

Սակայն աւելի ևս հետաքրքրական է մակարոյդ կենդանւոյս աշ-
խարհագրական բաժանումը: Ճարոնի կեղրոնը՝ երկու սահմանափակ-
կեալ տեղեաց մէջ կը գտնուի, և այնքան առատութեամբ, որ բոլոր ժողո-
վրդեան մեծ տառապանաց տորիթ համարուած է: Առաջին տեղին
Օքայամա գաւառին մէջն է, և աղմնուտ երկրի մը վրայ շինուած
քանի մի փարթիկ գիւղեր կը բովանդակէ, ուր երբեմն ծով էր,
մինչդեռ այսօրուան օրս յորվաստանս փոխարկուած է. այս տեղույն
բնակչաց 20 առ 100 նոյն մակարոյդ ճճիներէն բռնուած են: Ասկէց
երկու հազարմետր հեռաւորութեամբ, բնակիչը տեղեաց զմակա-
րոյդ կենդանին հազիր կը ճանան: Մինչդեռ նոյն տեղէն 70 հազա-
րամետր հեռու, 200 բնակչաք փաքրիկ գիւղի մը մէջ, նոյն մակարոյդ
կենդանին նորէն կը գտնուի, ուր զարձեալ յետին աստիճանի առատ
է, և գրեթէ ժողովրդեան կէսը անկից բռնուած են: Ճարոնի միւս մա-
սից մէջ երկրերան ձարունեանն ՚ի մարդս խիստ հազուագիւտ է,
սակայն Դոքիոյ կատուաց լեարդից մէջ կը գտնուի: Վերոյիշեալ
երկու ապականեալ տեղեաց մէջ, Հնդիկք՝ անմաքուր և յետին աստի-
ճանի աղտեղի ջուր մը կ'ըմպեն: Խիստ հաւանական է որ՝ այս ջրոյ
հետ ՚ի միասին երկրերան ձարունեանի սերմն ալ կ'ընդունին, որ
փոքրիկ խեցեմորթ մ'է կամ կակլամորթ մի:

Շնչառորին արեան եւ հիւսուածոց. — Բնախօսք համաձայն չեն այս ինդրոյս վրայօք, թէ արդեօք մնուցիշ չնչառութիւնքն արեան մէջ կը կատարուին թէ հիւսուածոց ներքին մասանց մէջ, Անցեալ տարի Միին - կտուար բարիզու գիտութեանց համալսարանին մէջ, կարհանի և Քինքանտի փորձերն մէջտեղ բերելով, կը ցուցնէր թէ արիւնը օդոյ առջև ձգելով՝ խիստաքիշ չնչառութիւն կը կատարէ. Եթէ օդով շարժենք, իւր գոյնն զգալի կերպով չփոփոխիր, և ածխածնաւկան թթուուափ մասնկունք միայն կ'արձէկ, Միինչդեռ եթէ արեան մէջ կտոր մը թարմմկունք յաւելունք, Կեղանիւթն իսկոյն ի թխադդյն կը փոխարկի, և ամենամեծ քանակութեամբ ածխածնական թթուուափ կ'արձէկ. Ասկից կը հետևի ուրեմն, թէ հիւսուածոց և միծնու լրտային օդոյ միջատեղին գտնուող արիւնը, պէսք է որ ստէպ մեծաւ քանակութեամբ կազմուած ածխածնական թթուուատն գուրս տայ, և անոր փոխարէն օդէն թթուածին ծծելով՝ հիւսուածոց հազրդէ:



Օդոյ մէջ գտնուող բոյնք. — Ոմանք յարդի տարրաբանից ցըցուցին, թէ երբ առողջ մարդու կամ կենդանւոյ թոքերէն արտաշնչուած ջրեղէն գոլորշին խտացնենք, յետին աստիճանի թունաւոր և ազգու հեղուկ մի կը ստանանք, որ կրնայ մահ պատճառել. և իրենց արդի փորձերովն հաստատեցին, թէ այս հեղանիւթոյն թունաւորութիւնը իւր մէջ բովանդակեալ գործարանաւոր կալաքարակերպ մարմնէ մ'է. Այս թոյնը սաստիկ գրգռիշ թոյներէն մին է, և եթէ երակաց մէջ կամ մորթոյ տակ մտցնենք՝ բուռն կերպով կ'ազդէ. իսկ փակ անօթոց մէջ եռացընելով, գեռ աւելի սաստիկ թունոյ կը փոխարկուի: Այս փորձերէս վերոյիշեալ գիտնականք հետևուցին.

Ա. Ներշնչած օդերինու մէջ թոքերէ արտաշնչեալ ցնդական մահացու նիւթ մի կայ, որ նոյն օդոյ մէջ գտնուող ածխածնական թթուուտէ շատ աւելի վնասակար է:

Բ. Մարդու՝ ինչպէս նաև կենդանեաց չունչն, իւր մէջ ամենէն աւելի զօրաւոր թոյներէն մին կը բովանդակէ:

Այս դիտողու թիւներէս յորդորեալ՝ տարրաբանն վիւոց, որ առաջուց մարդու մը կանոնաւոր արեան մէջ գտնուող կալաքարաձև մարմնոց վրայ զննողութիւնք ըլրեր էր, 'ի նոյն զննողութեանց ստացած քանի մի հետևանքներն հրատարակեցի: կալաքարաձև մարմնոց արմատներէն ումանք որը հաստատուն վիճակ մ'ունին, երիկամանց ձեռօք մարմնէն կ'արտաքսուին. իսկ ցնդականք՝ թոքային չնչարձակութեամբ դուրս կ'ելլին:

Արդ համբաւաւորն վիւոց, ցնդական կալաքարաց մէջէն կրցաւ չեղքացնել քլորաջրածնատները, որոց մէջ ամենէն աւելի առատու-

թեամբ գտնուողն՝ քլորաջրածնատ աւշակի է։ Սակայն մինչև ցարդ այլ և այլ պատճառաւց համար զեռ չկրցաւ ոչ այս քլորաջրածնատից քանակն իսկ, և ոչ անոնց բնախօսական արդիւնքներն զննել։ Բայց մենք վիւոցի ըրած այսչափ փորձերէն ալ կրնանք ապահովապէս հաստատել, թէ վերոյիշեալ տարրաբանից զննողութիւնքն ստոյգ են։



Յօդոյ ապդեցուրիւն բուսոց հիշանդուրեան։ — Յայտնի է թէ մը շակներն խիստ կարելոր կը համարին բուսոց և երկրիս վրայ ցօղոյ ինչալն։ Սակայն հարաւային գաւառաց մէջ բոյսերն չեն կրնար կանոնաւոր կերպով իրենց բուսաբերութեան ընթացքն աւարտել։ և ասոր պատճառ ցօղն է, որ նոյն երկիրները խիստ խոնաւ կը պահէ։ անոր համար ալ շատ մը ճեղքեր ունին և կակուղեն, որպէս զի կարենան զայն ամբողջապէս ծծել, որ իրենց համար երբեմն խիստ շատ է։ ընդ հակառակն եթէ քիչ մը սահուն և պինտ ըլլային, ցօղոյ մեծ մասն արևոր ջերմութենէն կը ցնդէր։

Բաց յայս անպատճենութենէն, վերջերս Բոյիեէօ ևս ապացուցուց, թէ ցօղն բուսոց համար ամենավնասակար է։ վասն զի մակարոյժ բուսոց հիւանդութիւնքն զգալի կերպով նոյն բուսոց մէջ կը տարածէ, ինչպէս, որթոյ տեսակ մի հիւանդութիւնն, գետնախնձորոյ հիւանդութիւնն, և այլն։ Հաստատեց գարձեալ, թէ այս ամէն հիւանդութիւնք՝ մակարոյժ սունկերէ յառաջ կու գան, որոց սերմանքը՝ հովն հեռաւոր տեղերէ բուսոց տերեւոց վրայ կը ձգէ։ սակայն այսու ամենայնի իրենց ապականութիւնը բուսոց մէջ չէին կարողը թափանցել, եթէ անոնց վրայ չբողբոջէին, մինչդեռ այս բողբոջման պատճառը նոյն ինքն ցօղն է։



Գիւտ լսնուկոյ տրւային մրենուրուին մէջ։ — Հիւթշին և չոլտէն նոր զրութեամբ և նորանոր գործեօք բաւական ատենէ 'ի վեր ետեսէ եղան արեային մթնուրտի վրայ գիտողութիւնք ընել որպէս զի կարենան որոշել ճշգութեամբ ասոր մէջ գտնուող տարերց բնութիւնը։ իրենց աշխատութեանց արդիւնքն այս եղաւ, որ զանազան գիտողութիւնք ընելով, մարմաց ցուցակին մէջէն չնչեցին քանի մի պարզ մարմիններ, որք կը կարծուէին թէ արեային մթնոլորտին մէջ կը գտնուին։ ընդ հակառակն նոր տարր մը գտան՝ զլմնոսկին, զոր մինչև ցայսօր կը համարէին գիտնականք թէ չգտանուիր։



թնարսմուրիւն առանց գործեաց . — Կազերոց ձնշականուրիւնն . — « Ահաւասիկ լայն բերնով շիշ մը , զոր հորիզոնական դրիք բռնած եմ . այս շին բերնին մէջ քիշ մը զէպ ՚ի ներս խցան մը կը դնեմն կ'ուզես , ըստ բնաբանութիւն ուսանող բարեկամացն միոյն , խցանին վրայ փշել . ապահով եմթէ չես կարող զայն շին մէջ ձգել » : Բարեկամն շիշը ձեռքն առաւ , ինչպէս սր ձեր կը ցուցնէ , հանգըս . տեամբ շոնչը բերնին մէջ ամփոփեց , և ուժով խցանին վրայ փշել սկսաւ , համոզեալ և ապահով՝ թէ զայն շին յատակը պիտի ձգէ : Մթծ սխալ . հազիւ թէ կը փշէր , խցանն իբրու ներքին զօրութենէ մի մղեալ , բուռն կերպով շին բերնէն դուրս ցայտեց , և բարեկամիս շրթանցը բախեց :



Նկարագրած երեսյթս դիւրաւ կը մեկնուի . փշելով շին սահմանափակեալ միջոցին մէջ , ներքին օդը կը ճնշուի յետոյ կ'ընդարձակի և զայն արտաքս կը մղէ . և խցանին արտաքսումն այնքան աւելի բուռն է , որքան աւելի ուժով փշուի :

Յաշողելու համար քանի մի կարեսոր նախազգուշութիւնք կը պահանջուին . պէտք է որ շիշը ներքուստ թաց չ'ըլլայ , և մանաւանդ շին բերանը բոլորովին չոր ըլլալու է . վասն զի խոնաւութիւնն զիսցանը շին հետ կը յարէ , որով տարակոյս ալ կը ծագի փորձին յաջողութեան . Հուսկյետոյ պէտք է որ շին ողորկ և սահուն ըլլայ : Լեմոնայուր կամ ասոր նման ըմպիկներ վաճառողաց շիշերն , վերսիշեալ փորձիս յաջողութեան յարմարագոյնք են :

Արուեստական հաւելիք . — Գիտեն ընթերցողք թէ Ամերիկացիք արտապոյ կարգի յաջողակութիւն մ'ունին արուեստական կարագ և պանիր շինելու . վերջերս սկսան նաև մի և նոյն յաջողակութեամբ հաւելիթ ևս պատրաստել : Ոնդ զիական օրագրաց մին՝ հետևեալ նկարագիրն մեզ կուտայ :

Պատրաստելու համար գործածուող մեքենայք, ամէնն ալ փայտաշէն են, վասն զի որ և իցէ մետաղի մը ներկայութիւն՝ հաւեկիթներուն համը կ'առէ, և անոնց եվքը կ'արգելու : Պատրաստութիւնն չորս գործողութեանցմէ կը բաղկանայ, որք են . հաւեկիթի գեղնուցին բաղադրութիւնն, սպիտակուցի պատրաստութիւն, նրբամաշկն և կճեպն :

Դեղնուցը խառնուրդ մ'է մսրացորենոյ ալեր, ցորենոյ ոսլայի, ձիթոյ և ուրիշ զանազան նիւթոց, զորս 'ի մի խառնելով թանձրնիւթ մի կը շինեն և մեքենայի մը բացուածքին մէջ կը ընուն, ուր բոլորաձն կերպարանք մ'առնելով կը պաղի : Ասկէց վերջ, գեղնուցն ուրիշ բաժանման մը մէջ կ'անցնի, ուր կը շրջապատի սպիտակուցով, որ և բընական հաւեկիթներու նման 'ի սպիտէ կը բաղկանայ : Սպիտն ևս կը պաղի և թաւալական յատուկ շարժմամբ մը ձուածն կերպարանք կը ստանայ, թաջորդաբար մերձակայ ընդունարանն կ'անցնի, զոր մաշկի մեքենան կը կուեն, ուր թեթև նրբամաշկով կը շրջապատի : Հուսկ ուրեմն կուգայ 'ի կենևարանն և իւր յետին պատեանը կ'առնու՝ գածէ շինուած թեփի մը կերպարանօք, սովորական կճեպէ քիչ մ'աւելի ստուար : Գործողութիւնն աւարտելով՝ զասոնք չորացուցիչ պնակներու վրայ կը զնեն, ուր թեփը խսկոյն կը չորնայ և ներքին մասն աստիճանաբար կը թանձրանայ և կը խտանայ : Այսպէս ձեացած հաւեկիթն ստոյգ հաւեկիթի մը ամենայն նմանութիւնքն ունի . իւրնդողք այնքան բազմաթիւ են, որ անհնար է զամենքն գոհայնել :

Այս հաւեկիթներն բոլորովին անվասա են, և ստոյգ հաւեկիթներու նման գոյացուցիչք և առողջարարք, բնաւ չեն ապականիր, և իրենց կճեպին ստուարութեան պատճառաւ, բնական հաւեկիթներէ աւելի դիւրատարք և դիւրակրելիք կը համարուին : Գորիշ գիւտոյն կը յուսայ 'թէ քիչ ատենէն հաւերն ալ վերցնել պիտի տայ :

Որպէս զի կարենայ 'ի ծագ կատարելութեան համնիլ, կը մազդեմք և մեք՝ որ այս արուեստական հաւեկիթքն կարենան այն տատիճանի հզդիւ նմանիլ բնական հաւեկիթներու, զորոնք թիսել տալով՝ վառեակներ ծնանին :



Զուարձալիք բուարսնականք . — Գիտնալով օրուան թիւը, եթէ ուղենք իմանալ թէ ինչ օր է, ներկայ գարուս համար հետևեալ հաշիւն կրնանք ընել : Իւրաքանչիւր ամսոց մի մի թիւեր կու տանք, օրինակ իմն :

Յունուար = 2	Մայիս = 8	Սեպտեմբեր = 0
Փետրուար = 5	Յունիս = 6	Հոկտեմբեր = 2
Մարտ = 5	Յուլիս = 1	Նոյեմբեր = 5
Ապրիլ = 4	Օգոստոս = 4	Դեկտեմբեր = 0
Նահանջ տարւոյ համար Յունուար = 4		Փետրուար = 4 :
Գէտք է գումարել օրուան թիւը, ամսոյն համապատասխան թիւը, տարին (դուրս ձգելով հազարը և հարիւրները), տարւոյն մնացածին չորրորդ մասը՝ գուրս ձգելով մնացորդը, և գումարը 7 թիւով բաժ. նելու է : Եթէ բաժանմանէն մնացորդ չելէ, արևելեայց համար օրն ուրբաթ է. եթէ ելլէ 1, օրն շաբաթ է. եթէ 2, օրն կիրակի է, և եթէ 3, օրն երկուշաբթի է. և այլն :		
Օրինակ իմն, զիտնալով որ այս տարի ըստ արևելեայց թագէոսի Առաքելոյն տօնը Յուլիս 22 ին կու գայ, կ'ուզեմ իմանալ թէ ինչ օր կը հանդիպի, այսպէս կ'ընեմ.		
Օրուան թիւն է	22	
Յուլիս ամսոյն համապատասխան թիւ	1	
Տարին դուրս ձգելով հազարը և հարիւրները	89	
89 թուոյն չորրորդ մասը	22	
Կ'ելլէ գումար	434.7=19 և կը մնայ 1	
Ուրեմն ըսել է թէ ըստ արևելեայց այս տարի թագէոսի առաքե- լոյն տօնը շաբաթ կը հանդիպի:		
Դարձեալ մարդուն մէկը ծնած է 1863 դեկտեմբեր 7, որ օրը ծնած է .		
Ամսոյն թիւը	7	
» համապատասխան թիւը	0	
Տարւոյն թիւը	63	
63ին չորրորդ մասը	15	
	85.7=12 և կը մնայ 1	
Ըսել է թէ շաբաթ օր ծնած է :		
Այս ըստ արևելեայց իսկ արևմտեայց համար 0 կիրակի օրուան կը համապատասխանէ, 1 երկուշաբթի օրուան, 2 երեքշաբթի, և այլն. Օրինակ իմն .		
Ըստ արևմտեայց Միխաթար Աբրահամյր վախճանեցաւ 1749 Ապրիլ 27 ին, որ օրը վախճանեցաւ. կը գտնենք		
Տարւոյն թուականը	49	
Ապրիլ ամսոյն համապատասխան թիւը	1	
Օրուան թիւը	27	
49 ին չորրորդ մասը	12	
	89.7=12 և կը մնայ 5,	
Ըսել է թէ օրն էր ուրբաթ :		

Զինակեր բոյսք . — Մսակեր և միջատակեր բոյսերէ վերջ , մօտերա ձկնակեր բոյսք ևս գտնուեցան :

Մօսլէյ դիտեց որ շատ մը նորածին ձկունք՝ հասարակ որովայ- նատունկ (Utricolaria vulgaris) կոչուած բուսոյ փոքրիկ փամիտչտնե- րուն մէջ փակեալ մնացեր էին : Աւզեց փորձով իրն ստուգել . և տե- սաւ որ շատիրն զլուխնէն բռնուեր էին , այլք պոչերնէն . և մէկ հատն միայն՝ երկու փամիտչտներէ բռնուած էր , յորոց միոյն մէջ զլուխը կը գտնուէր , միւսոյն մէջ պոչն :

Այս փոքրիկ ձկունքս իրենց բանտէն դուրս չեն կրնար ելել , վասն զի նոյն բուսոց գեղացին փշոտ մազերն որը դէպ 'ի ներս գարձած են , զիրենք կ'արգելուն : Վերջապէս ստուգուեցաւ որ որովայնա- տունկն յիրաւի անդամազննայան և բնախօսական երևոյթք մեզ կը ներկայացնէ , և ստուգիւ ձկնակեր բոյս մ'է :



Հեռախօս գործոյն կիրառութիւնը՝ հեռագրական լուրերն ընդ- հատելոց համար . — Հեռախօս գործոյն անթիւ կիրառութիւնքն արդէն իսկ ծանօթ են ամենուն : Բաց 'ի իւր այն գործածութեանցն՝ պէտք է յաւելուլ միանգամայն թէ մեծաւ գիրութեամբ հեռագրա- կան լուրերն կ'ընդունի , և անոնց գաղտնակնիքն բոլորովին կը լսուծէ : Այս նոր գիւտը պատերազմի ժամանակի շատ օգտակար պիտի ըլլայ , թշնամեաց բանակին միտքն իմանալով՝ անոնց խորհուրդքն ցըուել չանալու , առանց կասկած մ'իսկ տալու իրենց : Վասն զի հեռագրի թէ ելերուն ամեննեին իսկ պայիլ պէտք չէ , այլ բաւական է շափաւոր երկայնաւթեամբ զուգահեռական մետաղեայ թել մը հաստատել , որոյ մի ծայրն հեռավխօս գործոյն հետ հաղորդակցի . և ահա ասոր մէջէն հեռագրական գործոյն ամենայն նշանակքն կը լսուին :

Սակայն միւս կողմանէ այս անպատճհութեան դարման մը գտան . այս ինքն է , հեռագրական թէ են պէտք է որ կը կին ըլլայ , և մի և նոյն ժամանակ երկու թէ ելերուն ծայրէն ալ հեռագիրը զարնելու է : Այս ատեն երրորդ մը ուրիշ բան չի լսեր , բայց եթէ խառնուրդ ձայնից՝ ուսկից անհնար է իմաստ մը հանել :

Կ'երկի թէ Աւստրիական տէրութիւնն այս անպատճհութեանս մասնաւոր ուշ գնելու ետեէ է :



Մրովային ձկանց առատութիւնն . — Հիւքալէյ 'ի Լոնտրա ըրած բանախօսութեանց միոյն մէջ , կը համարի որ 1886 տարւոյ յունուար և փետրուար ամիսներուն , Նորուեկիոյ ափանց մօտ ձողաձկունք այն-

քան առատ էին, զորս շեղակուտելով կրնային 120 - 160 ոտնաշափ բարձրանալ՝ հազար մէդր քառակուսի, բովանդակելով 120 միլիոն ձկունք: Հաշուելով թէ ասոնց մէ իւրաքանչիւրն մի մի հարինք ուտեն ամէն օր, շարժուան մէջ ամենքն 'ի միասին 840 միլիոն պիտի սպառեն: Նորուեկից բոլոր ձկնորսներն չեն կրցած բնաւ անոնց մէ 400 միլիոն որսով: Եւ բոլոր աշխարհիս ձկնորսներն մէկտեղ առնելով, որսալ ջանացած ձողաձկանց, աղկերաց, թիւնիկներու, հարինքներու, և այն, հինգ առ հարիւր կարողք չեն եղած ձեռք բերել: Միով բանիւ, Ովկիանոսի մէջ ձկանց առատութիւնն անսպառելի է:



Բուշական գետնասիւծ. — Արդէն ծանօթ է ընթերցողաց գետնափի ինչ տեսակ կենդանի ըլլան, որ ստէպ ստէպ իւր գոյնն կը փոփոխէ. այս պատճառաւ իւր անոննն երբեմն ուրիշ մարմնոց ալ կը տրուի, իրենց ունեցած նման յատկութեանցն համար. ինչպէս 'ի Տարրաբանութեան զյերամազնանատ կալիոնի' մետաղական գետնափիւծ կ'անուանեն: Այսպէս նաև վերջի ատեններս թէ հուանթերէկի կրմին մէջ նոր տեսակ բոյս մը գտան, որ օրուան մէջ երեք անգամ իւր գոյնն կը փոփոխէ. որով և 'ի բուսաբանից բուշական գետնափիւծ անուանեցաւ: Նոյն բոյսը առաւտեան սպիտակագոյն է, ցորեկը կարմիր գոյնն մը կ'առնու և անուշահոտութիւն կը բուրէ, իսկ երեկոյեան երկնագոյն կ'ըլլայ:



Գիշերը բացուող ծաղկունք. — Ծանօթ է ամենուն որ քանի մի ծաղկունք գիշերները կը բացուին և օրուան մէջ կը գոցուին. աակայն մինչև այսօր թփիկներու և խոսային բուսոց մէջ այս բանս նկատուած էր. մինչդեռ արդ Գոմպէկի մօտ կօս կզզւյն մէջ ծառ մը գտան, որ մի և նոյն երեսյթը ճշտիւ մեծ կը ներկայացնէ. արևու մօնալէն վերջ ծաղկունքն կը բացուին և յիտին աստիճանի անուշահոտութիւն մը կը բուրեն. արշալուսոյն՝ նոյն ծաղկանց մի քանին կը թարշամին և կը թօթափին, այլք կը մնան:



Քանափ, հիշսելոր ծառայող նոր բոյս մը. — Կասպից ծովուն եղբաց վրայ՝ հիւսելու ծառայող նոր բոյս մը գտնուեցաւ, զոր Հընդիկը Քանափ, կոչեցին: Ամառը կը բուսնի և երեք ամսոց մէջ տասն տաք կը բարձրանայ. իւր արամագիծն 2 - 3 հարիւրորդամէզը է:

Զասիկայ արուեստիւ աղէկ մշակելէ յետոյ, իւր նեարգերովն ա-
մենայարգելի հիւսելի նիւթ մի կը ստանան, կակուղ, ձգտական, որ
մետաքսի կը նմանի. դիմացկուն թելերու կը վերածուի, զոր քլորով
կը սպիտակացնեն, և այս կազէս ամենեին չյարուիր: Քանափով շե-
նուած և սպիտակացած կերպասից վրայ՝ ամէն գոյն տպագրութիւնք
կը լինին և մինչև ցարդ կահ կարասեաց համար գործածուած կեր-
պասքն՝ ասոր բաղդատութեամբ ոչինչ են:

Սակայն աւելի մեծ գործածութիւն ունի՝ մախաղներ, կտաւներ,
կտաց ծածկոցներ, առասաններ ջինելու, որոն հաւասարող չզբա-
նուիր ոչ աժանութեամբ և ոչ իսկ արտաքոյ կարգի դիմացկունու-
թեամբ:

Տեսակարար կշիռն՝ կանեփիէ վեց անգամ աւելի թեթև է, և շատ
աւելի դիմացկուն: Այսպէս քանաքի երեք թեթրով հիւսած 8,25
հազարորդամէդը արամազիծ ունեցող չուան մը, 270 հազարորդա-
զրամ կշռով խորտակեցաւ. և նոյն չուանին մէջէն երեք թելերէն մին
հանելով, երբ կրկին փորձով մը խորտակել ուզեցին, 180 հազարոր-
դազրամէ կշռ պէտք եղաւ:

Եթէ մոտածենք թէ Ռուսաստան միայն ամէն տարի 150 միլիոն
պարկէ աւելի կը գործածէ այս նիւթէս, դիւրաւ կրնանք ըմբը-
նել ինչ աստիճանի օգտակար ըլլան:



Նոր օդաչափի բոյս մը. — Նօվաշ, նոր բուսոյ մը վրայ զոր ինքն
չայր մեր կը կոչէ, նորանոր դիտողութիւնք ընելով հիանալի յատ-
կութիւն մը գտաւ. այս ինքն է, օդաչափի նման օդոյ փոփոխու-
թիւնքն կը ցուցնէ, ինչպէս անձրե, քամի, խոնաւութիւն, չորութիւն,
և այլն:

Այս բոյսը ընդեղինաց տեսակէն է. 'Ի փորսիքա և 'ի թունուզ կը
գտնուի, և թփիկներու նման 1/2-2 մէդը կը բարձրանայ. ծաղիկքն
գեղնագոյն են, իսկ հունտերն կարմիր և սեաւ: իւր բացուելու և տա-
րածուելու կերպէն օդը կը գուշակուի: Այս տեսակ զարմանալի բոյս
մը՝ մինչև ցարդ Բուսարանից անծանօթ էր:



Արուեստական անձրե. — Ներկայ գիտութիւնս ֆուանքընի սկըզ-
բանց հետեելով, որ ամպոց կայծակներն իրցաւ արգելու, այժմ ու-
րիշ գժուարակներն խնդրոյ մը ետևէն ինկած է և կը ջանայ յաջո-
ղիլ. այսինքն է, ուզած ժամանակնիս անձրե ունենալ: Անգղիացւոց
երկարատար համբերութիւնն է, որ Աւստրալիոյ մէջ այս խնդրոյս

վրայ կ'աշխատին : Այս հեռաւոր երկրացս մէջ գործիք մը հնարեցին , որուն ձեռզք առաջին ամպն որ արցնելու ըլլայ՝ անձրեւ փոխարկել կը թանան : Եթէ այս գործւով իրենց նպատակին կարենան հասնիլ . մշակաց համար ասկից աւելի մեծ գիւտ մի անհնար է ընծայել , որք յաճախ անձրեղ կը կարօտանան , և չորութիւն չեն ախորժիր :

Մեքենան գնդանէ , որոյ մէջ ուժանակ (dynamite) կը դնեն , նոյն գունան ամպոց կը նետեն , որ աննզ կեղրոնն հասնելով կը պայթի և իսկոյն կը սկսի անձրե թօթափիլ :



Նոր հանրային մոմ մը . — Տօլֆուզ և լրէնսնէռ , անցեալ տարի Աւստրիոյ մէջ հանքային մոմի մը զանազան տեսակ օրինակներ հրատարակեցին , զորոնք քարիւղ բովանդակող երկիրներու խորերն՝ և անսոնց վրայի երկրաց մէջէն գտան : Այս մոմը կենդանի գեղին սակեցոյն է , նեարդային կերպարանք մ'ունի , և խտութիւնն է 0,60 . Հալելու համար 80° կ'ուզէ , և պաղելով թխագոյն նմանամասն կոյտի կը փոխարկուի : Ետացնելու ծառայած ջրոյն մէջ , կալաքարային քըլորուկ ամենսին չկրցան գտնել . սակայն օրինակներէն մին , աղուճակի փոքրիկ բիւրեղ մի կը բովանդակէր , որ որոշ կերպով կը տեսնուէր :

Լուծանելի է յեթեր , և եթերային լուծումն չոգիացմամբ՝ ասզաձև անգոյն բիւրեղներ կը հանգչեցնէ : Յետին աստիճանի լուծական է ծծմբուկ ածխածնոյ մէջ , զոր և՛ի գեղին կը գունաւորէ . իսկ եռացեալ ալքոնիի մէջ քիչ կը լուծուի : կը մօրի առանց մնացորդ մը թողլու , և ամենապայծառ լուսով կը վառի : կը կարծուի թէ այս մոմը լուսուրութեան համար կ'ուզեն գործածել . սակայն զուելով գեղատանց մէջ գեղոց պատրաստութեան ալ կրնայ ծառայել :



Խուզ և համբ կենդանիք . — Հետիեալ փորձովս ապացուցուած է , թէ կենդանեաց մէջ ալ խուզ և համերք կը գտնուին : Մշակին մէկը տասուերկու տարիէ ՚ի վեր կով մը կը սնուցաներ , զոր գնած ատեն քանի մի շարթուան հորթ էր : Երբ զի՞րը կանչէր՝ ամենեւին չէր իւմանար , և իւր չորս կողմը եղած աղաղակը բնաւ չէր լսէր . կովնոցին մէջ առանձին գտնուած միջոց , և կամ կերարությ ժամանակը հասած ատեն , որ ուրիշ կովերը աղաղակաւ զայն կ'ուզեն , ասիկայ բառաջող կովուց ձևը միայն կ'ընէր . կ'երկարէր իւր գլաւին և վիզը , կը բանար բերանը , սակայն որոշ աղաղակ մը չէր կարուզ հանել . հազիւ թէ ամենակարճ կոկորդային նուրբ ձայն մը կը լսուէր : Բնդ հակառակն

աչքերը շատ խոշոր էին . բայց տարօրինակ բան մը չգտնուեցաւ բնաւ ոչ ականջին մէջ և ոչ կոկորդը . Հետաքրքրական էր ստուգելն թէ այս դիպուածս կրնար արդեզք յաջորդութիւնն թողուլ . սակայն զըմաղդաբար իւր ծնած ուժ հորթուկներն ալ, դեռ մատաղ՝ ի սպան դանոց տարուեցան :



Մագնիսի յոյսն իւր նշանադէտ ծովեղերեայց . — Գերմանիոյ մէջ շատ փորձեր կ'ընեն, որպէս զի կարենան մագնիսի լցոն իրը նըշանագէտ ծովեղերեայց գործածել, իրենց 300 մէդր բարձրութեամբ զըրած նշանադէտն 50 քիլոմէդր հեռաւորութեամբ շատ պայծառ տեսնուեցաւ . Գործածուած կանթեղն՝ 900 ճրագաց զօրութիւն ունէր . և հանճարեղ կերպով գտնուած ցոլացուցի մը ձեռք, մի ենոյն կանթեղի լուսատու կարողութիւնն՝ մինչև 17,000 ճրագաց լուսոյն կը հաւասարէր : Եղած փորձերէն հետեցուցին, թէ մագնիսի լցոն՝ միւս որ և իցէ լրւսերէն աւելի զիւրութեամբ և աւելի խնայողութեամբ կրնանք ունենալ :



Կանքեղաց ապակրոյն գիրտոր . — Առկանտ, զուիցերացի աղքատ գործառին մին, մինցեռ օր մը իւր գործատան մէջ, առանց ապակոյ կանթեղի մը լրւոյն առջև նստած կ'աշխատէր, իւր քով գըտ նուող փոքրիկ եղայլուն, կոտրած յատակ ունեցող շշի մը հետ կը խաղարք : Տղան ձեռքի շիշն զանազան մարդունց վրայ դնելով կը զուարձանար, և հուսկ ուրեմն կանթեղին բացոյն վրայ դրաւ . Առկանտ անդրագարձաւ իսկոյն թէ կանթեղի բոցն բոլորովին այլափոխեցաւ, և իւր լցուը շատ աւելի պայծառացաւ : Այս զիպուածական փորձէն օգտագործ կ'եղանք կանթեղաց զանարեց, որ այսօրուան օրս առհասարակ կանթեղաց վրայ կը գործածենք :



Եղշերաւոր կանայք . — Այս հետաքրքրական երեսին մարդակազմութեան մէջ ստէպ կը հանդիպի : Տըմարնէյ եղջերաւոր կանանցմէ 59 հատ գտաւ, սակայն իւրաքանչիւրն զանազան երկայնութեամբ մի մի եղջիւր ունին, որ անկանոն կերպով գլխուն մէկ կողմէն կ'ենէ, և որոյ երկարութիւնն անգամ մը միայն 27 հարիւրորդամեդր էր . Ասոնցմէ զատ, Լիւթուանիոյ մէջ օրիորդ մ'ալ կայ կատարենէ Միջօֆէն անուամբ, որոյ վայելուչ ճակտին վրայ երկու փոքր և գեղեցիկ եղջերք կը գտնուին, չափակցեալ հեռաւորութեամբ բուսած, ինչպէս որ կենդանեաց մէջ կը նկատենք : Երեք տարի է որ ամուսնացեալ է, միշտ զուարիթ և գեղադէմ կերպարանք մ'ունի :

Այրանի դէմ դեղ . — Երբ մարդուս մարմնոյն մի մասն այրելու ըլլայ , ամէն բանէ առաջ ցաւն մեղմելու համար օդոյ վնասակար հազորդակցութենէն զայն պաշապանելու է . այս նպատակաւ կը գործածուին է և փեկուզի նման ուրիշ փոշիներ որք շատ օգտակար են : Հետեւայ դեղս ամենապարզ է և ամենաօգտակար , նոյն իսկ ծանրագոյն արկածից մէջ , բուռոց ժաղկըմն միջոց , պէտք է շոշանին ծաղկանց թերթերը ժողվել , և լայն բերան ունեցող շշի մը մէջ ձգելով , վրան աղէկ տեսակ ձէթ նուուլ : Այսպէս ամեն տարի նորը պատրաստելու է : Պատրաստուած թերթերը այրածին վրայ դրուելով , մարմնոյն այն մասը իսկոյն կը զովացնեն , և անոր բժշկութիւնը , յետին աստիճանի կը դիւրացնեն : Սակայն երբ այս գեղս պակսի , մերձակայ գեղատան մը մէջ Գանատայի բալասանն անհրաժեշտ կը գտնուի . եթէ մէկը նոյն բալասանով այրած տեղը ծածկէ , ցաւը մէկէն կը զադրի : Հուսկ ուրեմն երբ ոչ մին և ոչ միւսը գտնուին , քացախատ կապարոյ գործածութիւնն ալ ցաւը կը մեղմէ :



Ամենէն աւելի գործանակուն լեզուք . — Քիոչոփ անթիւ զննողութիւնք ընելով , ամենէն աւելի գործածական լեզուաց ցուցակ մը յօրինեց : Կը հաստատէ թէ 400 միլիոն անձինք շիներէն կը խօսին . յետ շինացւոյն՝ աւաւել գործածականքն հնդկաց և անգլիացւոց լեզուներն են , յորոց իւրաքանչիւրը 100 միլիոն անձինք կը խօսին . ուուսաց լեզուն 70 միլիոն . գերմանական լեզուն 57 միլիոնէն աւելի . սպանիացին 47 միլիոնէն աւելի . տասնուն կը յաջորդէ գաղղիական լեզուն : — Հայերէն լեզուն խօսողք Յ միլիոն կը հաշուին :



Գետին ինկած կենդանի մը վեր բարձրացնելու եղանակն . — Գաղղիացի անասնաբոյժ մը այսպէս կը գրէ . կենդանիք երկար աշխատութիւն մը կատարելէ ետև , և կամ երբ յոզնած են , յաճախ չեն ուզեր այլ ես աշխատիլ և կը պառկին : Զասոնք վեր բարձրացունելու համար ինձ ծանօթ եղող ամենայն միջոցներն ՚ի գործ դրի , սակայն յանօգուտու : Օր մը վերջապէս մտածեցի թէ բուռ մը խոր առնում , և անով կենդանւոյն ոնդունքն փակեմ . իսկոյն տեսայ որ կենդանին վեր կը ցատկէր օդ չնչելու համար , մինչդեռ պառկած ըլլալըմն իրեն կը պակսէր : Այս միջոցս գործածելով միշտ յաջողեցալ : Եթէ առձեռն պատրաստ խոր չգտնուի , ուրիշ որ և իցէ իր անոր տեղ կը բռնէ . ինչպէս չոր խոր , լամի կտորուանք , թուղթ :



Նոր տեսակ շարժուն Արուեստահանելի էս մը . — Գերմանական Արուեստահանգիսից ընկերութիւնն 5 միլիոն մարք դրամագիստով, կուզէ նոր տեսակ շարժական մեծ Արուեստահանդէս մը պատրաստել, և մասնաւոր ասոր համար ընդարձակ շոգենաւ մը շինել տալ Հրատարակած շրջաբերականին մէջ կը լսեն՝ թէ Արուեստահանդէսն երկու տարի պիտի տեսէ, և պիտի անցնի Պալդիկ ծովէն, Հիւսիսային և Հարաւային Ամերիկոյ եզերներէն, Զինաստանէն, Ճարապիայէն, և Միջերկրականի բոլոր մեծ հաւահանգիստներէն: Մեկնած միջոցն Համազուրկէն ճամբայ պիտի ելնէ:

ՃՐԱԿՐԻԱՅ ԹԷՄՄԻՆՔԻ

LձԱԿԱՑ և առուակաց մէջ բնակող կրիայից մէջ, առանց ամենեին փրիպանաց մէջ իյնալու երկիւ զի, կը ռնանք հաստատել թէ ամենէն անուանին և միանգամյան հետաքրքրական է թէ մինքի Զրայրիայն (Chély-dre), և կամ Մողլիսակրիայն (Empusaure). զդր Տիւմէրիլ և Բիբրոսն, սողնոց զասակարգութեան պարագրուկին, առանձին դասու բաժնեցին Ճախախարևակ (Gloditeas) անուամբ, թէ և անոնց սովորոյթքն, արտաքին տեսքն և կազմութիւնն քիչ տարրերութիւն ունին երկրաբնակ կրեայից կազմութենէն և սովորութէն:

Այս կենդանիս, զոր Բարիզու կենդանաբանական թանգարանն մեծ ուշադրութեամբ և խնամքով երկու հատ կը պահէ, նշանաւոր է և կը տարրերի առաջին հայեացքով ուրիշ կրիաներէն՝ իւր գլխոյն ահաւոր մեծութեամբն, և երեսին վրայ քնոց ոսկերաց մօս ունեցած արտաքոյ կարդի լայնութեամբն, և որ ընդ հուպ կը նեղնայ ծայրասուր շրթամբք, որոյ վրայ կը գտնուին ուղղահայեացարար արտաքս ցցուեալ ունդանց երկու խոռոշքն: իւր մեծաբիր աշքերն փալլիուն են, և շրջապատեալ ոսկրային և զուրս ցցուեալ փոքրիկ շրջանակէ մը, որ կ'անզրագառնայ աշաց ծիածանին վրայ: Բերանն, լայնարձակ հատումն մ'ունի, և ծնօտին եզերքը վերջացած է եղերային, սղցանման և հատու գանակով մի. որով ստորին ծամելաց վերնոյն մէջ մտնելովն, կը ձեացընէ կրկնասայր ահաւոր զէնք մի, կարող միանգամյան ի յօշոտել իւր որսերը. և որ մեծն է նաև ի պաշտպանութիւն իւր անձին, որով ահաբեկ և ծեռնունայն յետս կը լուրջէ իւր ոսովն: Վերին ճամբեաց ծայրը դէպ յառաջ և ի